ՀՍԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

15608

ԲԱՆԱՁԵՎԵՐ

ՀՍԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

355
Պ-24

«ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1929 ԵՐԵՎԱՆ

40897-ակ.

ՀԱՅՊՈՒԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 4456
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 2675 բ.
ՏԻՐԱԺ 1200

(373/45)

2001
23631-60

ԱՌԱՋԱԲԱՆ

ՊԱՋԸ–Ավիաքիմի Հայաստանյան 2-րդ համագումարը մի հայտարարի բերեց մեր 2 տարվա աշխատանքը և նշեց այն ուղիները, վորով մեր կազմակերպությունը պետք է ընթանա մոտակա ժամանակամիջոցում:

Կազմակերպությունն ընթացիկ 2 տարում աճել է 96%-ով, այսինքն մոտ 2 անգամ:

Սակայն աշխատանքի վորակը այդ աճմանը չի համապատասխանում:

Ահա թե ինչու աշխատանքի վորակի բարձրացումը դառնում է մեր հիմնական խնդիրը առաջիկայում:

Մյուս կողմից համագումարն ընդգծեց, վոր բավականաչափ ուշադրություն դարձված չի յեղել մեր խաղաղ շինարարության վրա, ինչպիսին է գյուղատնտեսական աշխատանքը և այստեղ մենք կավելացնեյինք՝ քաղաքացիական ավիացիայի շինարարությանը:

Վերջապես համագումարը նշեց մեր աշխատանքի թուլությունը կանանց, յերիտասարդության և ազգային փոքրամասնությունների միջև:

Մեր ամբողջ կազմակերպությունն իր ուժերը պետք է լարի համագումարի վորոշումները մասսայականացնելու և կենսագործելու համար:

ՀՍԽՀ ՊԱՔ-ԱՎԻԱՔԻՄԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ.

ՀՍԽՀ ՊԱՔԸ-Ավիաքիմի հանրապետական 2-րդ համագումարը լսելով կենտրոնական խորհրդի հաշվետու զեկուցումը իր 2 տարվա գործունեության մասին, գտնում է, վոր հաշվետու ժամանակամիջոցում ՊԱՔԸ-Ավիաքիմի կազմակերպությունն աճել և ունեցել է անվիճելի հաջողություններ, սակայն միաժամանակ մատնանշում է, վոր Հանրապետական կենտրոնի ղեկավարությունը և աշխատանքը կազմակերպչական ու ֆինանսական աստիճանում յեղել է անբավարար ինչպես անմիջական ղեկավարող ապարատի թուլության, այնպես և այդ ապարատում աշխատողների հաճախակի փոփոխության պատճառով:

Համագումարն արձանագրում է, վոր հաշվետու ժամանակաշրջանում, մասնավորապես վերջին 5-6 ամսվա ընթացքում կազմակերպությունն ունեցել է մի շարք նվաճումներ կազմակերպության աճման և աշխատանքների կարգավորման բնագավառում՝ ինչպես որինակ ՊԱՔԸ-Ավիաքիմի շարքերն են անցել աշխատավորական լայն զանգվածներ

(անդամների քանակը 24,000-ից հասել է 47,000-ի, այսինքն աճել է 96%-ով), կազմակերպության բջիջների և ղեկավար մարմինների աշխատանքներում ընդգրկվել են գործունյա և թարմ ուժեր, վորի շնորհիվ աշխուժացել են կազմակերպության աշխատանքները, կազմակերպչորեն ձևավորվել և ուժեղացել են մի շարք գավառային և շրջանային խորհուրդների աշխատանքները և այդ խորհուրդները ապահովվել են ազատ աշխատակիցներով, վերջերս ծրագրված կարգով է տարվել աշխատավորների ռազմականացման գործը, կազմակերպվել են ռազմական խմբակներ, պահեստի կրտսեր և միջին հրամանատարական կազմի կուրսեր, մի շարք գավառներում (Ցեբելան, Լենինական, Լոռի-Փամբակ) ոգա-քիմիական պաշտպանության գծով կազմակերպվել են բժիշկների, դռնապանների, քիմհրահանգիչների և հրշեջ խմբերի կուրսեր, միջոցներ են ձեռք առնված դպրոցներում ռազմական աշխատանք տանելու համար, վերջապես չափով ուժեղացել է կապն ու համագործակցությունը ԼԿԵՄ, պրոֆիությունների և գործարանների հետ:

Վերոհիշյալ նվաճումների հետ միասին ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպությունն ունեցել է մի շարք թերություններ:

1. Մասամբ բացակայել է կոլեկտիվ աշխատանքը և ղեկավարությունը թե՛ կենտրոնում և թե՛ տեղերում:

2. Հաճախակի փոփոխության են ենթարկվել պատասխանատու քարտուղարները և հրահանգիչները, ուշադրություն չի դարձվել նրանց վորակի բարձրացման վրա:

3. Թույլ են յեղել սեկցիաների աշխատանքները (բացի մի յերկուսից) և նրանց կողմից բացակայել է կենդանի կապն ու ղեկավարությունը տեղերի հետ:

4. Թույլ է յեղել կենդանի կապն ու ղեկավարությունը զորամասային բջիջների հետ:

5. Անբավարար է յեղել պահեստի հրամանատարական, քաղաքական, վարչական ու այլ կազմի և զորացրված կարմիր բանակայինների ընդգրկումը, հաշվառումն ու ոգտագործումը:

6. Թույլ է յեղել ՊԱԶԸ-Ավիաքիմի մասնակցությունը հերթական զորակոչերին և նրա ոժանդակությունը կ. բանակայինների ընտանիքներին:

7. Կազմակերպության մասնակցությունը զանազան կամպանիաներին յեղել է անկազմակերպ:

8. Աշխատանքների ընթացքում նկատվել է միակողմանիություն, այն իմաստով, որ ռազմական աշխատանքների կողքին բավականաչափ ուշադրություն չի դարձվել խաղաղ շինարարական աշխատանքին և հատկապես գյուղատնտեսության բարձրացման ու քաղաքացիական ավիացիայի զարգացման աշխատանքի վրա:

9. Անբավարար է յեղել ակտիվի հայտնաբերումը, հաշվառումն ու ոգտագործումը և հոգ չի տարվել ակտիվի վերապատրաստման համար:

10. Անհրաժեշտ չափով չի ոգտագործվել մամուլը:

11. Կաղացել են ագիտպրոպաշխատանքները, չի հրատարակվել մատչելի գրականություն:

12. Անկանոն է կազմակերպության վիճահաշվառման գործը:

13. Բավականաչափ չեն ընդգրկված կազմակերպության մեջ ազգային փոքրամասնությունները, կանայք և յերիտասարդությունը:

Ցեղնելով վերոհիշյալից ՊԱԶԸ-Ավիաքիմի Հայաստանյան 2-րդ համագումարը նորընտիր խորհրդին առաջարկում է՝

1. ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

1. Մշակել հատուկ ձև և կարճ ժամանակամիջոցում կատարել կազմակերպության վերահաշվառում նրա քանակը և կազմը պարզելու համար:

2. Տեղերի միջոցով կատարել ակտիվի հաշվառում ու կարգավորել նրա ոգտագործումը. կազմակերպել կենտրոնում ու տեղերում ակտիվի վերապատրաստման կուրսեր:

3. Ուժեղացնել կենդանի ղեկավարությունը տեղերի հետ, թարմացնել և ուժեղացնել հրահանգիչների կադրը և կիրառել ձրի հրահանգիչների ոգտագործման սիստեմը:

4. Կարգավորել խորհրդի նախագահության և սեկցիաների նիստերը, ապահովելով կոլեկտիվ աշխատանքն ու ղեկավարությունը. լսել տեղերի հաշվետու զեկուցումներն ու տալ համապատասխան դիրեկտիվներ:

5. Տեղերի հետ կապն ու ղեկավարությունն ուժեղացնելու նպատակով հրավիրել քարտուղարների, սեկցիաների նախագահների և ակտիվի խորհրդակցություններ թե՛ գավառային և թե՛ հանրապետական մասշտաբով:

6. Մշակել հատուկ կանոնադրություններ խորհուրդների և սեկցիաների աշխատանքների համար:

7. Ուժեղացնել կապը պետական և հասարակական մարմինների ու կազմակերպությունների հետ, ստեղծելով անհրաժեշտ համագործակցություն:

8. Վճռական և կտրուկ միջոցներ ձեռնարկել կազմակերպության մեջ հասարակական կարգապահությունն անհրաժեշտ բարձրության վրա դնելու համար, որն իրականացնելու համար ուժեղացնել գործնական և ագիտպրոպ աշխատանքը:

9. Հատուկ ուշադրություն դարձնել կազմակերպության մեջ ինքնաքննադատության լոզունգի կիրառման վրա, նկատված թերությունները վերացնելու և աշխատանքներն աշխուժացնելու համար գործի կանչելով ամբողջ կազմակերպությունը:

10. Ուժեղացնել կապն ու ղեկավարությունը գորամասային բջիջների նկատմամբ:

11. Ուժեղացնելով գործնական և ագիտպրոպ-աշխատանքները, շարունակել կազմակերպության մեջ աշխատավորական լայն մասսաներին ընդգրկելու աշխատանքը, հատուկ ուշադրություն դարձնելով ազգային փոքրամասնությունների, կանանց և կոմսոմոլականների ընդգրկման վրա:

12. Միջոցներ ձեռք առնել բոլոր գավառներում, իսկ նյութական հնարավորության դեպքում նաև բոլոր շրջաններում, ազատ վարձու աշխատակիցներ ունենալու և հրաժարվել այդ աշխատակիցների հաճախակի փոփոխություններից:

13. Շրջխորհուրդներին կից կազմակերպել աշխատավորության ռազմականացման գյուղատնտեսական և ագիտպրոպ սեկցիոներ:

2. ԱԳԻՏՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.

1. Ագիտպրոպաշխատանքները կարգավորելու և սիստեմատիկ դարձնելու համար կանոնավորել ագիտ-պրոպսեկցիաների աշխատանքները և միաժամանակ ուժեղացնել ղեկավարությունը տեղերի ագիտ-պրոպ սեկցիաների վրա:

2. Լայն կերպով ոգտագործել մամուլը, մանավանդ «Խորհրդային Հայաստան», «Մահկալ» և «Կարմիր Զինվոր» թերթերը, պարզաբանելով կազմակերպության բացերը, նվաճումները և հերթական անելիքները:

3. Միջոցներ ձեռք առնել մատչելի լեզվով և եժանագին մասսայական գրականություն հրատարակելու ասպարիզում և միաժամանակ լայն չափով տարածել Հայկական Հրաձիգ Դիվիզիայի Քաղբաժնի հրատարակած ու հրատարակվող գրականությունը:

4. Թե՛ յերկրի պաշտպանության և թե՛ սոցիալիստական շինարարության առպարեզում ՊԱԶԸ-Ավիաքիմի կատարած աշխատանքների շուրջը հասարակական կարծիք ստեղծելու համար ուժեղացնել ագիտպրոպաշխատանքը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում: Այս ուղղությամբ ոգտագործել խրճիթ-ընթերցարանները, ակումբները և այլն:

5. Հարց բարձրացնել հատուկ ՊԱԶԸ-Ավիաքիմի որ ունենալու մասին:

6. Կարգավորել և կահավորել ռազմական անկյունները և այդ անկյունների աշխատանքները դարձնել հետաքրքրական:

7. Լայն չափով ոգտագործել կուլտուրական ուժերին՝ բժիշկներին, գյուղատնտեսներին և մասնավորապես ուսուցչությանը:

8. Կազմակերպությունը ակտիվ մասնակից դարձնել տարվող ընթացիկ կամպանիաներին:

3. ԿԱՆԱՆՑ ՄԵՋ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.

1. Տեղերում հրավիրել կանանց խորհրդակցություններ կանանց դերն ու անելիքները յերկրի պաշտպանության գործում լուսաբանելու համար:

2. Բանգեղջբաժինների հետ կանանց պատգամավորական ժողովներում հատուկ զեկուցումներ դնել ՊԱԶԸ-Ավիաքիմի նպատակների ու անելիքների մասին և հատուկ կամպանիա անցկացնել կանանց ՊԱԶԸ-Ավիաքիմի շարքերը ներդրավելու համար:

3. Պատրաստել ակտիվ կանանցից ձրի հրահանգչական կադր, վորոնց ամեն կերպ ոգտագործել ՊԱԶԸ-Ավիաքիմի նպատակները կանանց մեջ մասսայականացնելու գործում:

4. Բոլոր գավխորհուրդներին և շրջխորհուրդներին կից կազմակերպել աշխատավոր կանանց մեջ աշխատող սեկցիաներ:

5. Ուժեղացնել ու կարգավորել առաջին ոգնության (սանիտարական) և կանանց հրաձգային խմբակների աշխատանքը վորակյալ խմբակավարներ տրամադրելով:

6. Կանանց յերկրի պաշտպանության գործին ակտիվ մասնակից դարձնելու համար անհրաժեշտ գտնել տեղերում կազմակերպել հատուկ (կարելի յե նաև յերկսեռ) կուրսեր, իսկ վորտեղ հնարավոր է նաև խմբակներ՝ կապի (հեռախոսուհիների և հեռագրիչների), ռազմա-սանիտարական, քիմիական պահեստներում աշխատողների, հետախուզային գործն ուսումնասիրողների, թիկունքային պաշտպանության, հրաձգային և ռազմա-վարչատնտեսական ծառայության:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համագումարը լսելով ԿՎՀ-ի զեկուցումը արձանագրում է, որ հաշվետու ժամանակաշրջանում համեմատած անցյալ տարիների հետ, որոշ նվաճումներ են արված կազմակերպության ֆին-տնտեսական դրությունը բարելավելու բնագավառում: Թե՛ կենտրոնում և թե՛ գավառներում որոշ չափով անց են կացել նախահաշվային աշխատանքի, տեղ-տեղ կանոնավորված է անդամավճարների գանձման գործը, որոշ չափով կանոնավորված է նաև մատակարարման գործը:

Սրա հետ միասին նկատվել են մի շարք եյական բացեր՝

1) Ընդհանուր առմամբ բացակայել է կայուն ֆինանսական բաղան:

2) Սեկցիաները չեն բավարարվել ըստ նախահաշվի, որի հետևանքով աշխատանքները թույլ են ընթացել:

3) Ընդհանրապես բացակայել է կայուն նախահաշիվը, որպիսի հանգամանքն ազդել է աշխատանքների վրա:

4) Միաժամանակ նկատվել է ֆինանսական անկարգապահություն և կամպանիաների ընթացքում դրամական հաշվետվություններ չներկայացնելու դեպքեր, որպիսի հանգամանքը դրկել է կենտխորհրդին անցած կամպանիաների մասին լրիվ պատկեր ստանալու հնարավորությունից:

5) Մի շարք գավկազմակերպություններ չեն ներկայացրել միամսյա և յեռամսյա ֆին-հաշվետվությունները:

6) Մատակարարման գործը դրված է յեղել վոչ բավարար հիմքերի վրա, որի հետևանքով մի շարք գավկազմակերպությունների պահանջները չեն բավարարվել:

7) Անդամավճարների գանձումը դեռևս չի կանոնավորված:

8) Շրջանային խորհուրդներն ու բջիջները կանոնավոր չեն ստանում իրենց հասանելիք տոկոսները մուտքի վճարներից ու անդամավճարներից:

9) Բավականաչափ ուշադրություն չի դարձվել իրավական անդամակցության խնդրի վրա, որը կազմելու յե կազմակերպության պրակտիկ աշխատանքներն աշխուժացնելու կարևոր նյութական աղբյուրներից մեկը:

10) Թե՛ կենտրոնական և թե՛ տեղական

վերստուգիչ հանձնաժողովները խոշոր չափով թերացել են իրենց վրա դրած պարտականությունները կատարելուց:

11) Կենտրոնական և տեղական վերստուգիչ հանձնաժողովների միջև բացակայել է կենդանի կապը և բավարար հիմքերի վրա չի դրվել դրավոր ղեկավարությունը:

12) Վատնումների և զեղծարարությունների դեմ ժամանակին հարկ յեղած միջոցներ ձեռք չեն առնվել:

Վերոհիշյալից յելնելով համագումարն առաջարկում է նորընտիր կենտխորհրդին և կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովներին՝

1. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել կազմակերպության համար ֆինանսական կայուն բազա ստեղծելու վրա, ոգտվելով բոլոր այն նյութական հնարավորություններից, որոնք թույլատրելի յեն ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպության համար:

2. Անցնել կայուն նախահաշիվների ու սեկցիաներն ապահովել անհրաժեշտ դրամով, մտցնել խիստ կարգապահություն բյուջեների ծախսման գործում:

3. Կազմակերպության ֆինանսական դրությունը բարելավելու համար առաջարկել վարից վեր մուծելու ունեցած պարտքերը:

4. Հաշվետվությունը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար այդպիսին կենտրոնացնել ՊԱԶԸ-Ավիաքիմի կենտխորհրդում:

5. Հատուկ ուշադրություն դարձնել անդամավճարների գանձման խնդրի վրա, այդպիսին հասցնելով 100 տոկոսի: Գտնել անհրաժեշտ անդամավճարների չափի բարձրացումը և առաջարկել նորընտիր կենտխորհրդին մշակելու այդ չափը և այդ մասին հարց հարուցելու մեր պատգամավորության կողմից Անդրկովկասյան համագումարի առաջ:

6. Առաջարկել գավխորհուրդներին, վորպեսզի նրանք շրջխորհուրդներին և բջիջներին հատկացնեն իրենց հասանելիք տոկոսները մուտքի վճարներից, անդամավճարներից և այլ գումարներից: Այս վորոշումը լրիվ կիրառելու համար առաջարկել կենտխորհրդին հատուկ շրջաբերականով պարզաբանել մինչև բջիջը հասանելիք տոկոսների չափը:

7. Իրավական անդամակցության խնդրի լուծումը համարել հարվածային և ձեռք առնել կտրուկ միջոցներ խնդիրը վերջնականապես լուծելու համար:

8. Ուժեղացնել կենդանի և դրավոր կապը տեղերի հետ, պարտավորեցնելով ԿՎ Հանձնաժողովին հանդես գալու հատուկ զեկուցումներով բյուրոների և պատ. քարտուղարների խորհրդակցություններին:

23631-60

Ա. Մեսրոպյանի անվան Պետական Հանրային Գրադարան
Публичная библиотека
973/46

9. Առանձին ուշադրություն դարձնել պարբերաբար ֆինանսական ստուգումներ կատարելու վրա։ Միաժամանակ պարբերաբար հետազոտություններ յենթարկել խորհուրդների ոպերատիվ-սեկցիոն աշխատանքները։

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻ-ԶՈՒՄ

1. Նկատի ունենալով, որ յերկրի պաշտպանության հզորացույն զենքերից մեկը կազմում է յերկրի ապահովումը գյուղատնտեսական մթերքներով, համագումարն արձանագրում է, որ գյուղատնտեսական արտադրության բարձրացման աջակցելու աշխատանքը կազմում է ՊԱՋԸ-Ավիաքիմի հիմնական և անհրաժեշտ անելիքներից մեկը։

2. ՊԱՋԸ-Ավիաքիմի գյուղատնտեսական աշխատանքի բնագավառում ամենահիմնական անելիքը պետք է համարել ընկերության գյուղացի անդամների գյուղատնտեսական անդրագիտության վերացումը և անդամների վողջ տնտեսության ռացիոնալացումն ու արտադրության բարձրացումը։

Այս նպատակով անհրաժեշտ է, վորպեսզի ՊԱՋԸ-Ավիաքիմի գյուղական բջիջները՝

ա) Ամբողջ կազմով մասնակցեն գոյություն ունեցող գյուղատնտեսական խմբակներում, իսկ այդպիսիների բացակայության դեպքում նախաձեռնեն գյուղատնտեսական

խմբակների կազմակերպմանը և ակտիվ մասնակցություն ցույց տան նրանց գործնական աշխատանքներին։

բ) կապ հաստատեն տեղի ագրո-պրոպհանձնաժողովի և շրջանի գյուղատնտեսական պերսոնալի հետ և նրանց միջոցով բջիջներում կազմակերպեն զրույցներ, դասախոսություններ և գյուղատնտեսական կարճատև դասընթացքներ։

գ) կազմակերպեն մրցումներ բջիջներում և մասնակցեն շրջանային ու այլ գյուղատնտեսական ցուցահանդեսներին։

դ) ընդառաջ գնան շրջանի գյուղատնտեսներին և վերջիններիս ցուցմունքներով ու ղեկավարությամբ կազմակերպեն իրենց տնտեսություններում ցուցադաշտեր և այլ ցուցադրական աշխատանքներ կիրառելով գյուղատնտեսության նորագույն ձևերը։

ե) հարկ յեղած դեպքում և վորտեղ հնարավոր է գյուղատնտեսի համաձայնությամբ և բջիջի վորոշումով պարտադիր համարեն բջիջի անդամների համար հետևյալ ռացիոնալ միջոցների ներածումը իրենց տնտեսության մեջ՝ սերմերի զտում, գոմաղբով և մոխրով պարարտացում, կուլտուրական բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելը և այլ տարբական ու մատչելի

ռացիոնալ ձևերի կենսագործումը տնտեսության մեջ (ագրոմինիմում)։

3. Գյուղատնտեսական սեկցիաները պետք է ուժեղացնեն իրենց գործունեությունը հետևյալ բնագավառներում՝ պետք է հրավիրեն արտադրական խորհրդակցություններ գյուղում, հայտարարեն և կազմակերպեն մրցանակաբաշխություններ շրջանային կամ գավառային մասշտաբով, կազմակերպեն ջոկատներ հատկապես պտղատու ծառերի և այգիների վնասատուների դեմ կռվելու համար, բանան և ղեկավարեն գյուղատնտեսական տարբեր ճյուղերի վերաբերյալ դասընթացքներ և հրատարակեն գյուղատնտեսական մատչելի գրականություն, այս բոլոր խնդիրների առթիվ համաձայնության գալով Հողժողկոմատի և տեղական հողբաժինների հետ թե՛ ֆունկցիաների ճշտման և թե՛ աշխատանքի շրջանացման ու ծավալի վերաբերմամբ։

4. Գյուղատնտեսական սեկցիաները և բջիջները ամենասերտ կապը պետք է հաստատեն գավառներում գործող բոլոր փորձնական հիմնարկությունների հետ և միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի այդ հաստատություններն իրենց մասսայական փորձերը կազմակերպեն ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջների անդամների տնտեսություններում, ստեղծելով այդպիսով

ՊԱԶԸ–Ավիաքիմի կադրերից փորձագետ գյուղագիներ:

Գյուղատնտեսական սեկցիաները համաձայնության պիտի գան փորձնական հիմնարկությունների հետ և նրանց ղեկավարությամբ ու մասնակցությամբ պիտի փորձեն դնելու գյուղատնտեսության քիմիզացիայի այնպիսի խնդիրներ, վորոնց կիրառումը մտնում է ՊԱԶԸ–Ավիաքիմի նպատակների մեջ և համարվում է անհրաժեշտ:

5. Միաժամանակ համագումարն արձանագրում է, վոր ամբողջ ԽՍՀՄ–ի մասշտաբով խորհրդային հասարակայնության առաջ դրված սերմնացանի կամպանիան, վորը նպատակ ունի բարձրացնել բերքատվությունը և ավելացնել գյուղատնտեսության արտադրանքը, պարտադրում է ՊԱԶԸ–Ավիաքիմին ակտիվ մասնակցություն ցույց տալ սերմանման կամպանիաներին, ներգրավելով այդ աշխատանքի մեջ ՊԱԶԸ–Ավիաքիմի գոյություն ունեցող բոլոր բջիջները:

Բջիջների մասնակցությունն այդ գործում պետք է արտահայտվի նախ և առաջ անդամների ամբողջ վարելահողերի ցանքով, այն էլ անպայման մաքրած սերմերով և հողերի պարարտացումով: Այդ նպատակով պիտի հանձնարարել բոլոր գյուղական բջիջներին գործնական կապ հաստատել սերմանման տեղական մարմինների ու հողբաժինների հետ և համապատասխան միջոցներ ձեռք առնել չքավոր տնտեսությունների հողերը ցանելու ու պարարտացնելու, դիմելով նաև աշխատանքի ինքնոգնության մատչելի ձևերին:

6. Սերտ կապ հաստատել կոլեկտիվ տնտեսությունների և ՊԱԶԸ–Ավիաքիմի գյուղական բջիջների միջև ներգրավելով կոլտնտեսությունների անդամներին ՊԱԶԸ–Ավիաքիմի կազմակերպության մեջ և ընդհակառակը:

7. Ուժեղացնել գեղջկուհիների մասնակցությունը գյուղական բջիջների գյուղատնտեսական աշխատանքի մեջ:

8. ՊԱԶԸ–Ավիաքիմի գյուղբջիջների գյուղատնտեսական աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար սերտ կապ հաստատել գյուղատնտեսական արտադրության հետ կապված բոլոր կազմակերպությունների հետ, ինչպես և գյուղյերիտ և գյուղատնտեսական դպրոցների, տեխնիկումների և Պետհամալսարանի ուսանողության հետ, նրանց ուժերն ոգտագործելու նպատակով:

ՊԱՋԸ-ԱՄԻԱՔԻՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱ-ԳԱՎԱՌՈՒՄ

Համագումարն արձանագրում է, վոր դեռ ևս բավականաչափ չեն ծավալվել ռազմական սեկցիայի աշխատանքները կենտրոնում, ղեկավարությունը գավսեկցիաների նկատմամբ բավարար չի յեղել, թե՛ կենտրոնում և թե՛ տեղերում բացակայել է ծրագրային աշխատանքը աշխատավորության ռազմականացման ասպարիզում և չի նկատվել տեղական սեկցիաների ինքնագործունեությունը:

Համագումարը հանձնարարում է նորընտիր խորհրդին՝

1. Նշել ռազմական խմբակների կայուն դիսլոկացիա ամբողջ հանրապետության մեջ և վերջնականապես կանոնավորել այդ խմբակների աշխատանքը:

2. Անհրաժեշտ համարել ըստ հնարավորության բոլոր գավ. և շրջկենտրոններում ու մեծ գյուղերում և անպայման բոլոր քաղաքներում ու արտադրական ձեռնարկներում ունենալ ՊԱՋԸ–Ավիաքիմի օրինակելի ռազմական անկյուններ:

3. Բոլոր գավկենտրոններում ունենալ ձգարաններ, վորոնք պետք է պիտանի լինեն թե՛ մանր տրամաչափի և թե՛ յերեք գծանի հրացաններից կրակելու համար: Հաջորդաբար անցնել նաև շրջկենտրոններում ձգարաններ կազմակերպելու խնդրին:

4. Կանոնավոր հիմքերի վրա դնել ռազմական խմբակների ու նրանց անդամների և մանավանդ ռազմական խմբակների ակտիվի հաշվառումը: Զորացրված կրտսեր և միջակ հրամկազմի դասընթացքներն ավարտածներին անխտիր լծել ռազմական խմբակների աշխատանքներին, խրախուսելով նրանց կատարած աշխատանքը:

5. Բարելավել հրացանների ու ռազմանյութերի հաշվառումը և պահպանումը:

6. Ռազմական խմբակներն ապահովել յերեք գծանի հրացաններով և փամփուշտներով անտես չառնելով նաև կոտորակներով հրաձգությունը:

7. Ռազմական խմբակների ուսուցման գործում վերացնել մի՛այն հրաձգություն սովորեցնելու թեքումը, ուժեղացնելով ռազմական դաստիարակության ասպարիզում կարևոր մնացած բոլոր մոմենտները, այն է՝ կարգապահությունը, զինվորական կեցվածքը, ճշտապահությունը, մաքրասիրությունը և

զորաշարժերի ժամանակ տրված հրահանգները ժամանակին կատարելը:

8. Ռազմական խմբակների պարապմունքների ընթացքում անհրաժեշտ ուշադրությունը դարձնել խմբակների անդամներին թիկունքի, արտադրական կենտրոնների և գավ. ու շրջ-կենտրոնների պաշտպանության խնդրի համար պատրաստելու վրա:

9. Ռազմական խմբակներն ապահովել գրականությամբ և այլ անհրաժեշտ ձեռնարկներով:

10. Պարբերաբար կազմակերպել ինքնուրույն զորաշարժեր, գլխավորապես մանր զորամասերով, զորացրված հրամկազմին հանձնարարելով լուծել այս կամ այն խնդիրը բանվորական և արտադրական կենտրոնների պաշտպանման բնագավառում: Մեծ զորաշարժեր կազմակերպել միայն զորամասերի հետ, կանխորեն այդպիսին լավ նախապատրաստելով:

11. Կազմակերպել դասախոսություններ բնակեցված վայրերում մարտ մղելու և հեղափոխական կարգ պահպանելու մասին:

12. Ռազմական սեկցիան իր անդամների միջոցով պարբերաբար պետք է ստուգի ռազմական խմբակների դրությունն ու նրանց աշխատանքը տեղերում:

13. Համագումարն արձանագրում է, որ ոդաքիմիական պաշտպանության բնագավառում աշխատանքը Հայաստանում սկսվել է 1928 թվին և պլանային կարգով տարվում է միայն 1929 թվից:

Համագումարն անհրաժեշտ է համարում ամբողջ կազմակերպության ուշադրությունը սրել ազգաբնակության ոդա-քիմիական անդրագիտությունը վերացնելու ուղղությամբ, որի համար անհրաժեշտ է՝

ա) անցնել ՈՔՊ սեկցիաների պաշտպանության ա՛յն գավառներում, ուր այդպիսին գոյություն չունի, ուշադրություն դարձնելով ակտիվ աշխատողների համապատասխան ընտրության վրա.

բ) ՊԱՋԸ-Ավիաքիմի Կենտխորհրդին կից ՈՔՊ սեկցիայի կողմից ազգաբնակությունն ընդգրկելու համար մշակված պլանն առաջին հերթին անց կացնել արտադրական ձեռնարկներում.

գ) ՈՔՊ քաղաքային ջոկատների ձևակերպումը վերջացնել ամենամոտ ժամանակի ընթացքում և այդ ջոկատներն ապահովել համապատասխան նյութական միջոցներով:

դ) առանձին ուշադրություն դարձնել հրահանգչական կադրեր պատրաստելու վրա, որոնց միջոցով և անց կացնել ՈՔՊ գործնական ձեռնարկումները.

ե) ուշադրություն դարձնել բժիշկների կադրեր պատրաստելուն և ոգտագործել ՈՌՊ աշխատանքների ընթացքում քաղաքացիական հիմնարկների տեխնիկական պերսոնալը:

զ) լայն կերպով ընդգրկել ՈՌՊ ջոկատների աշխատանքով կանանց, առավելապես բժշկա-սանիտարական և կապի զորախմբեր կազմակերպելու գծով.

ը) գերատեսչական զորախմբերի կազմակերպումը համաձայն հիմնարկությունների ու ձեռնարկությունների անելիքը: ՈՌՊ սեկցիաները պետք է լրիվ աջակցություն ցույց տան այդպիսիները վարժեցնելու և պատրաստելու գործին.

թ) ազգաբնակությանն ապահովել Ռազմքիմիական պաշտպանության վերաբերյալ հայերեն և թուրքերեն մատչելի գրականությամբ:

ՀՍԽՀ ՊԱԶՐ-ԱՎԻԱՔԻՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ.

1. Տեր-Գաբրիելյան—նախագահ
2. Մելիք-Շահնազարյան—փոխ-նախագահ
3. Գարագաշ—փոխ-նախագահ
4. Հովհաննիսյան Մամիկոն—Պատ. քարտուղար
5. Բաբլումյան
6. Գրիգորյան
7. Տարախչյան
8. Մամիկոնյան
9. Արարատյան
10. Ստեփանյան
11. Աբրահամյան
12. Մեդնիկյան
13. Ցերիցյան
14. Զիրախյան
15. Վարդանյան Սերգո (Տոկար Սերգո)
16. Ազարյան
17. Ցեսայան Գարեգին
18. Հակոբյան Հակոբ
19. Կամսարական

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ.

1. Հարությունյան Ռուբեն
2. Մինասյան
3. Մարտիրոսյան Մուշեղ
4. Աբաջյան Միսակ
5. Տանին
6. Շահբազյան

ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ.

1. Հովսեփյան Արմենակ
2. Բաղդասարյան Արմենակ
3. Հարությունյան Ավետիս
4. Գևորգյան Արամ
5. Խեչումյան Վարդուշ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ.

1. Սակովսկի
2. Թոխմախյան Արաքսի
3. Ղոքիմազյան Վարդան

Պետական Գրադարան
Ա. Մասիսյան
Էջմիածին
Публичная библиотека

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Առաջաբան 3

ՀՍԽՀ Պաչը-Ավիաֆիմի հաշվետու զեկուցման առթիվ 5

Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովի աշխատանքների մասին 14

Պաչը-Ավիաֆիմի դերը գյուղատնտեսության ասպարիզում 19

Պաչը-Ավիաֆիմի խնդիրները ռազմական աշխատանքի բնագավառում 24

2013
«Ազգային գրադարան»
NL0047956

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.